Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2018 թվականի մարտի 5-ի նիստում,
արձանագրություն N 5,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Կ.Լ.Աթոյան
«_05_» _____03_____ 2018 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՐԱԽՈՍՄԱՆ ԿԱՐԳ

1. **Ավարտական աշխատանքը** գրախոսության է ուղարկվում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) այլ ամբիոններ, ինչպես նաև թեմային առնչվող գիտական կամ տվյալ բնագավառում գործունեություն իրականացնող այլ կազմակերպություններ:
2. **Մագիստրոսական թեզը** գրախոսության է ուղարկվում թեմային առնչվող գիտական կամ տվյալ բնագավառում գործունեություն իրականացնող այլ կազմակերպություններ:
3. Գրախոսության նպատակն է ավարտական աշխատանքին կամ մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջների կատարման գնահատումը:
4. Գրախոսությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում (3-4 տպագիր էջի սահմաններում) պետք է ներկայացվի տվյալ ամբիոն՝ պաշտպանության սկզբից առնվազն 15 օր առաջ: Հիմնավորված պատճառով ավելի ուշ գրախոսելու դեպքում

(տվյալ ամբիոնի վարիչի գրավոր պատճառաբանությամբ) ավարտական աշխատանքի (մագիստրոսական թեզի) պաշտպանությունը կարող է հետաձգվել համալսարանի ռեկտորի հրամանով՝ մինչև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի վերջին նիստը:

5. Գրախոսությանը ներկայացվող պահանջներին չհամապատասխանելու դեպքում գրախոսը **չի վարձատրվում** և աշխատանքը տրվում է այլ գրախոսի:
6. Գրախոսության մեջ պետք է նշվի՝
    1) թեմայի արդիականության հիմնավորվածությունը,
    2) աշխատանքի նպատակը, խնդիրները, ուսումնասիրության կամ հետազոտության օբյեկտը, առարկան և մեթոդաբանությունը,
    3) բովանդակության վերլուծությունը ըստ առանձին գլուխների,
    4) օգտագործված գրականության վերլուծության և ուսումնասիրման աստիճանը,
    5) աշխատանքի ինքնուրույնության աստիճանը,
    6) եզրակացությունների և առաջարկությունների հիմնավորվածությունը,
    7) թերությունները և բացթողումները,
    8) աշխատանքի համապատասխանությունը տվյալ կրթական ծրագրով շնորհվող որակավորման պահանջներին:
7. Շրջանավարտը նախապես ծանոթանում է գրախոսության բովանդակությանը և նախապատրաստվում հրապարակային պաշտպանության՝ դրանում առկա դիտողություններին և առաջարկություններին պատասխանելու համար:

Հավելված

Հայաստանի պետական տնտեսագիտական

համալսարանի _____ ամբիոնի վարիչ

պարոն (տիկին) _____ -ին

Գրախոսության է ուղարկվում «_____» մասնագիտության «_____» կրթական ծրագրի առկա (հեռակա) ուսուցման բակալավրիատի 4-րդ (5-րդ) կուրսի, առկա (հեռակա) մագիստրատուրայի ուսանող (ուհի) _____ «_____» թեմայով աշխատանքը:

Պաշտպանությունը կայանալու է 201__ թ. «_____» «____» -ին:

Խնդրում ենք կազմակերպել աշխատանքի գրախոսությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրախոսություններին ներկայացվող պահանջներին համապատասխան (3-4 էջ):

_____ ամբիոնի վարիչ՝ _____

ամսաթիվ